Չինք վէց ղաթ տուն չինէր, նէրքինն զվէրինըն չիգիտէ ։
Տասըն հազար կարմունճ ունի, քաղաքին մէջն երթևեկէ .
Լանուց մէկ տեղ մի հէչ չիկայ, նէրքէն խանութ՝ վըրան տուն է ։
Ծովէն բացուած ցածուն տեղւանք քարով խիճով բարձրացընեն .
Քսան երեսուն տարի դատին՝ հազիւ տեղ մի ցամքըցընեն ։
Սամարքոյին մալըն շատ է . անով սարայներ կու չինեն,
Կամ կու ծախեն, կամ վարձոյ տան, հասպով ըզդրամն աւելցընեն ։
Մէկ քանի մեծ տոլապ չինած, ծովուն զատակըն կուքերեն,
Տանին 'ի յայն տեղըն լընուն՝ որ տեղ որ սարայ կուչինեն ։
Բան մ'այլ առջև տի[1] գըրէի, մոռացութեամբ խելաց չասի .
Բարկենին գառնաւալ ասեն, մեծ և փոքր կու խենդենայ .
Յորժամ որ ծնունդըն անցանի՝ բարեկենդանն ըսկըսանի .
Մեծ և փոքր սուրաթ դընեն, բազում կերպիւ առասպելի ։
Այն մեծ չըլթըրմաց կանայքըն ազգի ազգի սուրաթ հագնի .
Ազգի ազգի կերպ կու մըտնուն, կուգան 'ի ժուռ մէջ փողոցին ։

. . . .

Ի փիացայն տեղ չիմընայ սուրաթպազնուն հօգղապազնուն .
Այնչափ մարդիկ կուգան կուտլին[2], տեղ չիմնայ քայլափոխի ։
Ես կու կարծեմ զայս բանս վաղուց 'ի կռապաշտից ժամանակի,
Ի կռապաշտիցըն դարձեալ են, դեռ ևըս հոտ կայ 'ի միջի ։

. . . .

Այս հերիք է զոր գըրեցի . աճըզեցայ ձեզ ինչ գաղտնի ։
Ծովուս թասան զիս է առեր, ամենևին աչք չերևի ։
Ի բազում լիմանըլըխէ և 'ի քամու որ շատ լինի
Չիժաժցըներ տակմա քամի, յոյս մեր այն է՝ Քորֆէզ հասնի ,, ։

1 Պիտի ։

2 Կուտլին, կը դիզուին ։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Նոր գտնուած մոլորակը, որ Լըվէրրիէ կամ Պօսիդոն և կամ Նեպտունոս կ'ըսուի, հիմակուան աստղաբաշխներուն մեծ նիւթ եղած է դիտողութեան ։ Շիմքոյ անունով մէկը դիտեր ու ստուգեր է որ ան մոլորակին օրական լոյսը՝ լուսնի լուսէն 200 անգամ աւելի զօրաւոր է ։ Ասկէ երևոյթ մըն է որ պատճառը ճիշդ հասկընալը շատ դժուար պիտի ըլլայ . յայտնի է թէ գլխաւոր պատճառը մոլորակին բնական կազմութիւնն է ։

Քէյմպրիճ քաղաքին աստղաբաշխը Չէլլիս լաւ դիտակով զններ է նոյն մոլորակը մօտերս, ու կ'ըսէ թէ Երևակին պէս ասիկայ ալ վրան մանեակ մը ունի . և աս մանեկին տրամագիծը այնպէս կը համեմատի մոլորակին տրամագծին հետ՝ ինչպէս 3 առ 2 ։

Անցած տարի ութը հատ գիսաւոր գտնուեր էր այլ և այլ աստղաբաշխներու ձեռքով . իսկ աս տարի ինչուան հիմա մէկ գիսաւոր մը գտնուեր է, և է Լոնտրայի Հայնտ անունով անգղիացի աստղաբաշխին գտածը յունուարի 24ին ։